Նա պատմեց, թէ Կարօյի հայրը կոչւում էր Միր-Մարտոյ, նա պատկանում էր Ղարա-Մելիքների ընտանիքին, որ սերուած էր հայոց մի հին իշխանական տոհմից: Դարերի ընթացքում այդ տոհմի բախտը նոյնքան փոփոխութեան է ենթարկուել, որքան փոփոխական, յեղյեղուկ է եղել Հայաստանի դրութիւնը: Նա բարձրացել եւ խոնարհուել է իշխանութեան, աստիճանի բոլոր ելեւէջների մէջ, երբեմն տիրող իշխան, երբեմն հասարակ տանուտէր, երբեմն տաժանակիր հողագործ, — բաց երբեք չէ կորցրել իր ազնուապետական ոգին: Պարսից մարզպանների ժամանակ այդ տոհմը դեռ պահպանել էր հզօր նախարարի արտօնութիւնները, բայց արաբացոց արշաւանքների ժամանակ նա բաւական ընկաւ, երբ այդ ցեղի նշանաւոր իշխանները բռնելով, տարուեցան Դամասկոս եւ այնտեղ գլխատուեցան: Նրա մի ճիւղը բոլորովին ոչնչացաւ յունաց Կիւրապաղատների օրերում: Մոնղոլական արշաւանքների ժամանակ այդ ցեղից մի տղամարդ, որ իր թուխ դէմքի պատճառով ստացել էր թաթարների խանից «Ղարա-Մելիք» կոչումը, կրկին զօրացաւ: Նրա անունով այդ տոհմի ներկայացուցիչները սկսուեցան կոչուիլ Ղարա-Մելիքներ:

Հայաստանի յեղաշրջումների փոթորիկների մէջ այդ տոհմը անդադար արմատախիլ լինելով հայրենի երկրից, տարուբերուել է երբեմն Արարատ, երբեմն Վասպուրական, երբեմն Ատրպատական եւ երբեմն Փոքր-Հայքի կողմերը: Իսկ վերջին դարերում, երբ Վասպուրականի մէջ զօրացան քրդերը, Ղարայ-Մելիքներից մէկը, Մարաշի կողմերից փախստական գալով, հաստատուեցաւ Վանայ ծովակի հարաւային ափերի մօտ: Քուրդ ցեղապետների հետ դաշնակցելով, նա հետզհետէ ընդարձակեց իր իշխանութիւնը եւ տիրում էր ամբողջ Ռշտունեաց գաւառի վրայ: — Դա էր Կարօյի հայրը՝ Միր-Մարտօն: «Միր» տիտղոսը ստացաւ նա քրդերից, որ նշանակում է տէր, իշխան, պետ: Նրա հզօր ամրոցը գտնւում էր Ոստանի մօտ, մի լեռան անմատչելի բարձրաւանդակի վրայ, մի կողմից ծփում էր ծովակը, միւս կողմից, շրջապատած էր սարերի պարսպաձեւ շղթաներով:

Միր-Մարտօն, որպէս տեղային հայերի պետը, էր միեւնոյն ժամանակ ամենահարուստ մարդը ամբողջ գաւառի մէջ: Նա ունէր մի առանձին սնահաւատութիւն դէպի եօթնեակ թիւը եւ այդ պատճառով իր բոլոր հարստութիւնը բաժանած էր եօթն մասների վրայ: Նա ունէր եօթն ջրաղաց, եօթն ձիթհան, եօթն այգի, եօթն անտառ: Նրա տնից դուրս էր գալիս եօթն գութան, որ մշակում էին եօթն անգամ եօթ անասուն օրավար հող: Նրա սեփական արօտատեղերում արածում էին եօթն հօտ ոչխարներ, իւրաքանչիւր հօտը միագոյն, մէկը ճերմակ, միւսը սեւ, երրորդը շիկագոյն, չորրորդը խայտաճամուկ, հինգերորդը մոխրագոյն եւ այլն: Նոյն խորհրդաւոր թիւն ունէին